Լիազորությունների Շրջանակ

Սոցիալական մասնագետ

1. **<u>Ընդհանուր դրույթներ.</u>**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացնում է «Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագիրը՝ (ՀԳՌԿՄ 2): ՀԳՌԿՄ 2-րդ ծրագրի զարգացման նպատակն է. ա) շարունակել թիրախային համայնքներում արոտավայրերի և անասնապահության համակարգերի արդյունավետության և կայունության բարելավման ապահովումը և բ) ընդլայնել ընտրված անասնապահական մթերքի և բարձրարժեք ագրոսննդի արժեքային շղթաներից ստացվող արտադրանքի շուկայահանման ծավալները: Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է. ա) բարձրադիր տարածքներում գտնվող թիրախային համայնքների արոտավայրերի և անասնապահության համակարգերի արդյունավետության և կայունության բարելավման նպատակով մշակել և իրականացնել կառավարման պլաններ, բ) ապահովել արտադրողների և վերամշակողների կապը շուկաների հետ՝ շեշտադրում կատարելով ընտրված անասնապահական արտադրանքի (կաթ և միս), ինչպես նաև բարձրարժեք մթերքի վրա (միրգ և բանջարեղեն) և գ) աջակցել պետական կառույցների հզորացմանը, որոնք կարևոր դեր են խաղում նշված արտադրանքի շուկայահանման ծավալները ընդլայնելու համար:

Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող 5 տարի տևողությամբ ՀԳՌԿՄ 2 ծրագիրը բաղկացած է չորս բաղադրիչներից, որի ընդհանուր գումարը կազմում է 42.67 մլն. ԱՄՆ դոլար, որից 32.67-ը մլն. ԱՄՆ դոլարը ՄԶԸ ներդրումն է: Ծրագիրը հաստատվել է Համաշխարհային բանկի կողմից 2014 թվականի հունիսի 22-ին և ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 23-ին: Ծրագրի համառոտ նկարագրությունը բերված է ստորև.

2. **<u>Ծրագրի նկարագրությունը.</u>**

ՀԳՌԿՄ 2-րդ ծրագիրը բաղկացած է հետևյալ չորս բաղադրիչներից.

Բաղադրիչ 1. Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ: Այս բաղադրիչի նպատակն է շարունակել արդյունավետ և կայուն համայնքային կառավարման վրա հիմնված անասնապահական համակարգի զարգացումը մի շարք համայնքներում, որտեղ անասնապահությունը ապրուստի առաջնային աղբյուր է և համայնքները խիստ շահագրգռված են արոտավայրային անասնապահության բարելավման հարցում: ՀԳՌԿՄ նախորդ ծրագրում արդեն իսկ ընդգրկված 86 համայնքներին

կավելանան 20 նոր համայնքներ: Ֆինանսավորում կհատկացվի երեք հիմնական բաղադրիչների գծով.

ա) Արոտավայրերի/անասնապահության կայուն կառավարման ծրագրերի ներքո: Արոտավայրեր օգտագործողներին ընդգրկրող Արոտավայրերի օգտագործողների կոոպերատիվներ (ԱՕԿ) կստեղծվեն Հայաստանի 10 մարզերից 8-ի շուրջ 100 համայնքներում, որտեղ առկա են արոտավայրերի զգալի պաշարներ: Բացի այդ կկազմավորվի Համայնքների արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման կոմիտե (այսուհետ՝ ՀԱԿԱԶԿ), որի կազմում կընդգրկվեն ԱՕԿ-ի նախագահը, 2 ընտրված ԱՕԿ-ի անդամներ, 2 համայնքապետարանի անդամներ և գյուղապետը: ՀԱԿԱԶԿ-ն Մարզային աջակցության կենտրոնների (ՄԶԿ) և տեխնիկական փորձագետների աջակցությամբ կկազմի և կիրականացնի Արոտավայրերի կառավարման և անասնապահական զարգացման ծրագրերը (այսուհետ՝ ԱԿԱԶԾ):

բ) Համայնքային հիմնադրամ ծրագրերի իրականացման համար: Բոլոր ԱՕԿ-ներին ԱԿԱԶԾ-ների իրականացման համար կհատկացվեն դրամաշնորհներ:

գ) Կանանց/երիտասարդների հատուկ օժանդակության ծրագիր: Հատուկ վերապատրաստման և մոբիլիզացման գործողությունը միտված է ԱՕԿ-ներում և համայնքներում անասնապահական և արոտավայրերի կառավարման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում կանանց և երիտասարդների մասնակցության խրախուսմանը, ինչպես նաև անասնապահության ոլորտում երիտասարդների ավելի ակտիվ ներգրավմանը:

Բաղադրիչ 2. Արժեշղթաների զարգացում: Սույն բաղադրիչի նպատակն է հզորացնել Հայաստանի գյուղատնտեսական արտադրողների և վերամշակողների կարողությունները՝ ընտրված սննդամթերքի արժեքային շղթաների մասով ներքին պահանջարկը բավարարելու և միջազգային շուկա մուտք գործելու հնարավորությունն ապահովելու նպատակով: Բաղադրիչի շրջանակներում աջակցություն կտրամադրվի արժեքային ողջ շղթայում ընդգրկված սննդամթերքի բիզնեսով զբաղվողներին, ինչպիսիք են՝ գրանցված կազմակերպությունները, կոոպերատիվները և ասոցիացիաները:

Բաղադրիչ 3. Պետական կառույցների կարողությունների հզորացում: Այս բաղադրիչի նպատակը պետական հատվածի կառույցների կարողությունների ուժեղացումը՝ գործարարության զարգացմանը և Բաղադրիչներ 1-ի և 2-ի ներքո օժանդակվող արժեշղթաների շուկայահանմանը նպաստելու համար:

Բաղադրիչ 4. Ծրագրի կոորդինացում և կառավարում:

3. **<u>Ծառայությունների նպատակը</u>**

Այս հանձնարարականը նախատեսված է ՀԳՌԿՄ 2 ծրագրի շրջանակում Սոցիալական գծով փորձագետի կողմից մատուցվելիք խորհրդատվական ծառայությունների համար:

Այս աշխատանքի նպատակն է՝ խթանել ՀԳՌԿՄ 2-րդ ծրագրի սոցիալական կայունությունը և ապահովել Ծրագրի շրջանակներում բացասական սոցիալական ազդեցության բացակայությունը, ներառյալ. (i) համապարփակ ուշադրություն դարձնել Ծրագրի սոցիալական ազդեցության մեծացման և Ծրագրից բխող հնարավոր սոցիալական ռիսկերի նվազեցման կամ մեղմացման հնարավորություններին, (ii) վերահսկել Ծրագրի սոցիալական ազդեցության վերաբերյալ տվյալների հավաքագրումը, և (iii) վերահսկել Ծրագրի սոցիալական երաշխիքների իրականացումը և կառավարումը, ինչպես նաև ապահովել Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրության և Ծրագրի կողմից գործի դրվող երաշխիքային քաղաքականությունների հետ համապատասխանությունը: Սոցիալական մասնագետը իր աշխատանքներում պետք է ուղղորդվի ՀԳՌԿՄ 2-րդ Ծրագրի Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթղթով (ԲՍԿՇՓ), Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթղթով (ՎՇՔՓ) և Ծրագրի գնահատման փաստաթղթով.

- ծրագրի իրականացման շրջանակներում վերաբնակեցման դեպքում՝ ազդեցության մեղմացում,
- բողոքների բավարարման մեխանիզմի հասանելիության ապահովում Ծրագրի բոլոր շահառուների համար,
- սոցիալական ոլորտին առնչվող փաստաթղթերի վերաբերյալ հանրային իրազեկման ապահովում:

Սոցիալական հարցերով խորհրդատուի պարտականություններն են.

- Իրականացնել ուսումնասիրություններ սոցիալական երաշխիքների քաղաքականությունների և Ծրագրի երաշխիքների փաստաթղթերի շրջանակներում ստանձնած պարտավորությունների համապատասխանության վերաբերյալ (Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակ, Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ և անհրաժեշտության դեպքում վերաբնակեցման գործողությունների պլան) ՀԳՌԿՄ 2-րդ ծրագրի բոլոր աշխատանքների համատեքստում,
- Գնահատել Ծրագրի սոցիալական ազդեցությունը և ձեռնարկել մեղմացման միջոցառումներ վերլուծական ակնարկների և դաշտային այցելությունների միջոցով,
- Սերտորեն համագործակցել Ծրագրի թիմի հետ ՝Բանկի երաշխիքների պահանջների վերաբերյալ խորհրդատվություն և ուսուցում տրամադրելու նպատակով,

- Ծանուցել Ծրագրի ղեկավարին ցանկացած անհամապատասխանության կամ բացասական փորձի վերաբերյալ, ով իր հերթին պետք է ապահովի ծրագրի ամբողջ անձնակազմի հետևողականությունը,
- Անհրաժեշտության դեպքում աջակցել վերաբնակեցման գործողությունների պլանի համար պատասխանատու մասնագետին,
- Սերտորեն համագործակցել ՀԳՌԿՄ2-րդ ծրագրի բնապահպանական մասնագետի հետ՝համակարգելու ՀԲ-ի երաշխիքների քաղաքականությանն առնչվող բոլոր գործողությունները,
- Ապահովել Ծրագրի գործունեության համապատասխանությունը Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթղթին,
- Վերստուգել Ծրագրի բողոքների բավարարման մեխանիզմի գործառույթը, ներառյալ ծրագրի բոլոր աշխատողների վերապատրաստումը՝ համաձայն բողոքների բավարարման մեխանիզմի գործառույթի սկզբունքներին և ընթացակարգերին, ապահովել բողոքների բավարարման մեխանիզմի գործառույթը յուրաքանչյուր ծրագրի բաղադրիչի համար,
- Ապահովել բողոքների բավարարման մեխանիզմի պատշաճ իրականացումը,
- Զեկուցել Համաշխարհային Բանկին Ծրագրի հետ կապված ցանկացած միջադեպի վերաբերյալ ոչ ուշ, քան պատահարի պահից 48 ժամվա ընթացքում,
- Մասնակցել Ծրագրի Կապալառուների կողմից հաղորդված Ծրագրի հետ կապված միջադեպերի ուսումնասիրությանը, գնահատել միջադեպի ծանրությունը, ապահովել հրատապ արձագանք, հավաքագրել անհրաժեշտ տվյալներ, անհրաժեշտության դեպքում մշակել հանրային իրազեկման գործողություններ,
- Համագործակցելով բաղադրիչի համակարգողների հետ ձեռնարկել գործողություններ Ծրագրում կանանց և երիտասարդությանը ներգրավելու նպատակով,
- Ապահովել կանանց և երիտասարդների մասնակցությունը Ծրագրի գործողություններին, ներառյալ դասընթացներ, սեմինարներ և այլն,
- Մուտքագրել համապատասխան տվյալներ սոցիալական հարցերի վերաբերյալ, ներառյալ կանանց, երիտասարդության, խոցելի խմբերի բողոքների և դժգոհությունների վերաբերյալ,
- Մշակել ամսական հաշվետվություններ, ինչպես նաև առաջընթացի վերաբերյալ հաշվետվություններ (Համաշխարհային բանկի յուրաքանչյուր վերահսկողական պատվիրակության այցից առաջ),
- Մասնակցել ՀԲ վերահսկողական առաքելություններին:

5. Աշխատանքների իրականացման և հաշվետվությունների ներկայացման մեխանիզմներ.

Սոցիալական հարցերով խորհրդատուն հաշվետու է անմիջապես Ծրագրի ղեկավարին և բոլոր հիմնական գործողությունների վերաբերյալ պետք է տեղեկացնի և դրանք համաձայնեցնի ԳԾԻՎ-ի հետ: Սոցիալական հարցերով խորհրդատուն պետք է սերտորեն համագործակցի ՀԳՌԿՄ 2-րդ Ծրագրի համակարգողների, ՄԱԹ-երի և համապատասխան անձնակազմի, ինչպես Համաշխարհային Բանկի թիմի հետ:

ԳԾԻՎ-ը խորհրդատուին կտրամադրի նյութատեխնիկական աջակցություն, ներառյալ՝ իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն, անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրում:

Խորհրդատուն պետք է ներկայացնի իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ:

6. Պահանջվող որակավորումները

- Հասարակագիտության, սոցիոլոգիայի, սոցիալական աշխատանքների կամ հարակից ոլորտի բարձրագույն կրթություն,
- պետական ոլորտում և/կամ միջազգային կազմակերպություններում համապատասխան պաշտոնում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որոնցից առնվազն 2 տարի բնակչության խոցելի խմբերի հետ աշխատանքների իրականացման ոլորտում,
- սոցիալական գնահատման, ուսումնասիրությունների, ներառյալ որակական ուսումնասիրությունների մեթոդաբանության մշակման և իրականացման փորձ,
- ՀԲ կամ միջազգային ֆինանսական ինստիտուտների երաշխիքային քաղաքականության, ՀՀ օրենսդրության համապատասխան պահանջների, ինչպես նաև դրանցից բխող գործընթացների իմացություն, համապատասխան ոլորտում այլ երկրների փորձի ուսումնասիրության և լավագույն փորձի ներդրման կարողություններ: Վերաբնակեցման գործողությունների պլանների մշակման կամ իրականացման փորձը կդիտվի որպես առավելություն:
- գործնական աշխատանքային փորձը Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ծրագրերում, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի, Կովկասյան և Կենտրոնական Ասիայի երկրներում կդիտարկվի որպես առավելություն,
- տարբեր շահագրգռված կողմերի հետ, ներառյալ՝ պետական և միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ներ, արդյունավետորեն հաղորդակցվելու ունակություն,
- փորձ Համաշխարհային Բանկի կամ դոնորների կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերում և նրանց պահանջների իմացություն,
- անգլերենի գերազանց իմացություն (գրավոր և բանավոր), ներառյալ անգլերեն լեզվով բարձր որակի հաշվետվություններ գրելու կարողություն: Ռուսերենի իմացությունը՝ կդիտարկվի որպես առավելություն: